



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

24 մարտի, 2014թ., ք. Երևան

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրելի սեմինարը

2014 թվականի մարտի 24-ին Երևանի «Բեստ Վեստեռն Կոնգրես» հյուրանոցի «Ուիկատ» սրահում տեղի ունեցավ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրելի սեմինարը:

«Եվրամիությունը մեծապես ողջունում է այն փաստը, որ քաղաքացիական հասարակությունը և ՁԼՄ-ները շատ ավելի ջանքեր են ներդնում կոռուպցիայի դեմ պայքարի գործում, ինչպես ազգային այնպես էլ տարածաշրջանի մակարդակներում», - նշեց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչ Դագնա Լեվանդովսկան:

«Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ամեն ինչ սկսվում է քաղաքացիական հասարակության կողմից բարձրաձայնմամբ. հիմնականում քաղաքացիական հասարակության կազմակերպված խմբերը փորձում են իրենց ձայնը հասցնել իշխանություններին», - ասաց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Գարեն Զադոյանը:

«Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների մասնակցությունն էապես ազդեցություն կունենա ծրագրի հաջողության վրա: Գործընկեր երկու կազմակերպություններս խիստ կարևորում ենք հատկապես մարզային հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներգրավվածությունը», - ասաց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ, ծրագրի գործընկեր Շուշան Դոյդոյանը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նրանց կտրամադրվեն փոքրիկ դրամաշնորհներ, ինչպես նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմները ամրապնդելու համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կստեղծվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Միջոցառմանը մասնակցեցին ներկայացուցիչներ քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և ՁԼՄ-ներից:

Ծրագիրը իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Ծրագրի հանրային կայքերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.ayla.am>:

Կատարող՝ Նարինե Կարապետյան, Էլ.փոստ՝ pr@ayla.am:



Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռապատճե: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: